

Առարկայի անոտագիա.

“Կենսաբանական տվյալների բազաները և կենսաինֆորմատիկայի հիմնական մեթոդները”

Անհրաժեշտ նախնական գիտելիքներ. առարկայի արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ է՝

-ունենալ կենսաքիմիայի, մոլեկուլյար կենսաբանության բազային գիտելիքներ, տիրապետել համակարգչային տարրական հմտությունների (օրինակ՝ excel, touch typing). Բացի դրանից, կարևոր է տիրապետել անգլերենի միջնակարգ դպրոցի մակարդակի գիտելիքների:

Դասավանդման նպատակը և խնդիրները

Նպատակ

Ժամանակակից կենսաբանական տվյալների բազաների մասին գիտելիք և աշխատանքի հմտություններ, նաև պատկերացում կենսաբանական մակրոմոլեկուլների հետ հետազոտական աշխատանքի վերաբերյալ:

Խնդիրներ

-Կարողանալ ստանալ անհրաժեշտ ինֆորմացիա կենսաբանական հսկայական և բազմազան տվյալների բազաներից:

-Տիրապետել սպիտակուցների և նուկլեինաթթուների հաջորդականությունների հիմնական վերլուծական մեթոդներին, կարողանալ աշխատել այդ հաջորդականությունների մի քանի անալիտիկ մեթոդներով (BLAST-ի, Dotplot-ի տարբեր մոդիֆիկացիաներ), գտնել հոմոլոգիական մակրոմոլեկուլներ կամ դոմեններ: